այստեղ Ձեզ համար դժուար կը լինի»,— ասում է բարեկամ կոմիսարը:

Մեկնել, մեկնե՛լ...

* * *

— ... Կանչուած եմ Ժողովրդական Դատարան:

Գործ թիւ այսինչ: Վերաւորանք միլիցիականին իր պաշտօնը կատարելու ժամանակ, հակայեղափոխական ընթացք: Նուազագոյն պատիժ՝ վեց ամիս բանտարկութիւն:

Ներկայանում եմ դատարանին:

Փաստաբան՝ համալսարանի դասախօս Զուբար: Ձեռքին «Մարտակոչ»ի վերջին թիւը, ուր Մեսանիկեանը «Դաղուիթահայ աշխատաւորութեան» կոչի մէջ յայտարարում է, «որ Հայաստանում սկսուել է նոր ոսկեդարը, ու մենք ուրախ ենք, որ Զարեանի նման մտաւորականները մեզ հետ աշխատում են»...

Վկաներ՝ նկարիչ Ս–ը, երգիչ Ն–ը եւ կոմունիստ գործիչ Վ–ը:

Փայտէ մաշուած սանդուխներ: Գրեթէ դատարկ մի սրահ, մի քանի նստարաններ եւ փոքրիկ մի սեղան:

Սպասում ենք: Կոմունիստ բարեկամը մտնում է դատաւորների սենեակը եւ վիճաբանում: Լսւում են հեռաձայնի ձայներ: Կոմունիստ բարեկամը վերադառնում է. հիմա կը դան:

Դատարա՛նը: Ոտքի են կանգնում:

Մէջտեղը կարճահասակ, մօրուքը վաղուց չածիլած, դէմքերը թափթփած, աննշան դէմքով մի երիտասարդ: Աջ կողմից բարձրահասակ մի կին, ահագին փորով, մազերը գլխի կատարին ժողովուած, չինական աչքերով: Ձախ կողմից, նոյնպէս կարճահասակ, քիթը ներս ընկած, աչքերը պլղած, բարձր կօշիկներով մի անձնաւորութիւն:

— Դատարանը,— յայտարարում է ցած ձայնով մէջտեղի մարդը,— ձեր գործը որոշում է կրճատել:

— Կրճատե՞լ,— պատասխանում է փաստաբանը,— մենք պահանջում ենք որ լսուի:

— Ձենք կարող, հրամայել են կրճատել:

Դուրսը արեւ է: Օրը պայծառ:

Մարդաբ աղայի սրճարանում խմում ենք վերջին սուրճը: Մարդաբ աղան մօրուքը չոյում է ու նայում Արարատին: Մտածկոտ է եւ տըխուր:

— Այսօր վերջին օրն է,— ասում է նա,— խանութը փակւում է: Էլ ա՛յնքան տուգանք, ա՛յնքան տուգանք... Խմեցէ՛ք, մէկ հատ էլ խմեցէք...

ՀՐԱԺԵՇՏ

Գարուն է նորից: Հին մի տանձենիի կատարին արշալոյսը պայթել է աննիւթական հըրաբուխի նման:

Մի սարեակ՝ ճիւղի վրայ թառած կտոր այդ ածուխը՝ երգում է: Ճառագայթաթաթախ երկնքի տակ, տեսարանը սարսռում է: Զգիտեմ՝ ո՞րտեղից մանուշակի հոտ է գալիս: Սարեակի կտուցը փայլում է եւ բարախում է փոքրիկ իր կոկորդը:

Երգում է: Լայնատարած եւ մոգական դաշտի համար, նոր ծաղկող նշենիների եւ հեռաւոր տարածութիւնների համար: Դարնանային առաւօտները հանդիստ են եւ պայծառ: Ու սարեակի այդ երգը հանդիստ է եւ լուսաւոր:

Սակայն, տխուր է սիրտս: Հրաժեշտի այս բոպէին ամբողջ հայրենի իմ երկիրը սարեակի հետ երգում է սրտիս մէջ: Ո՞վ է իմանում, կարելի է վերջին անգամ:

Ձեմ ուզում ոչ մի բանի մասին մտածել: Լաւ է լուսաւոր առաւօտեան այս վերջին ողջոյնը, լա՛ւ է մանիշակի հոտը եւ լա՛ւ են գարնան մէջ դղրդող աղբիւրների եւ ջրվէժների ձայները:

Այնտեղ Արագածը եւ Արարատը աղամանդէ արեւների նման լուսաւորում են դաշտ եւ սար, եւ Հայոց երկիրը աւելի քան երբեք հնչուն եւ պայծառ:

Եւ ես, վերջին անգամ, եկել եմ մուրալու մի քիչ լոյս եւ մի քիչ երգ, որպէսզի անցորդի իմ նոր ճամբաներիս վրայ երաշը ապրի տեւական եւ յիշատակը ամուր կեանքով:

Երախտապարտ եմ աչքերիս մէջ ամբարած արծաթէ տեսիլքների համար, սրտիս մէջ մխրճուած բոլոր յոյզերի համար, մսերիս մէջ թրթռացող եւ ուղեղիս ծալքերի մէջ դրոշմըուած ապրումների եւ հէքեաթային երազանքների համար:

Երախտապարտ եմ, օ՜ իմ երկիր, քո հասցրած ցաւի եւ վէրքերի համար...

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան